ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2018 թվականի մայիսի 16-18-ը
ք.Աստանա /Ղազախստանի Հանրապետություն/ գործուղման արդյունքների մասին

1. Անուն, ազգանուն՝
Հովհաննես Ազիզյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետը՝
ք. Աստանա, Ղազախստանի Հանրապետություն, 2018 թվականի մայիսի 12-ից 18-ը

4. Հրավիրող կողմը՝
2018 թվականի Աստանայի Տնտեսական Համաժողովի կազմակերպիչների և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի նախաձեռնությամբ

5. Գործուղման նպատակը՝
«Եվրասիական տնտեսական միության ու դրա անդամ պետությունների՝ մի կողմից, և Իրանի Իսլամական Հանրապետության միջև՝ մյուս կողմից, ազատ առևտրի գոտու ձևավորմանն ուղղված» Ժամանակավոր Համաձայնագրի և «Եվրասիական տնտեսական միության և իր անդամ պետությունների՝ մի կողմից, և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության՝ մյուս կողմից, միջև տնտեսական և առևտրային համագործակցության մասին» Համաձայնագրի համաձայնագրերի տեքստերի վերջնական տեխնիկական շտկման աշխատանքային հանդիպումներին մասնակցություն,

2018 թվականի Աստանայի Տնտեսական Համաժողովի շրջանակներում անցկացվող՝ «ԵԱՏՄ և Իրան. Արտոնյալ առևտրի պայմաններում համագործակցության նոր հեռանկարներ» և «Ինչպես ստեղծել Եվրասիայի միասնական տնտեսական տարածք» խորագրերով քննարկումներին մասնակցություն,

«Եվրասիական տնտեսական միության ու դրա անդամ պետությունների՝ մի կողմից, և Իրանի Իսլամական Հանրապետության միջև՝ մյուս կողմից, ազատ

առևտրի գոտու ձևավորմանն ուղղված» Ժամանակավոր Համաձայնագրի ստորագրում,

«Եվրասիական տնտեսական միության և իր անդամ պետությունների՝ մի կողմից, և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության՝ մյուս կողմից, միջև տնտեսական և առևտրային համագործակցության մասին» Համաձայնագրի ստորագրում:

6. Քննարկված թեմաները՝

Իրականացվել են «Եվրասիական տնտեսական միության ու դրա անդամ պետությունների՝ մի կողմից, և Իրանի Իսլամական Հանրապետության միջև՝ մյուս կողմից, ազատ առևտրի գոտու ձևավորմանն ուղղված» Ժամանակավոր Համաձայնագրի և «Եվրասիական տնտեսական միության և իր անդամ պետությունների՝ մի կողմից, և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության՝ մյուս կողմից, միջև տնտեսական և առևտրային համագործակցության մասին» Համաձայնագրի համաձայնագրերի տեքստերի վերջնական տեխնիկական շտկման աշխատանքային հանդիպումները՝ համաձայնագրերի կողմ հանդիսացող երկրների փորձագետների միջև:

«ԵԱՏՄ և Իրան. Արտոնյալ առևտրի պայմաններում համագործակցության նոր հեռանկարներ» խորագրով անցկացված միջոցառման ժամանակ քննարկվել են մասնավորապես՝ Հայաստանի բիզնես միջավայրի համար հիմնական առավելությունները «Եվրասիական տնտեսական միության ու դրա անդամ պետությունների՝ մի կողմից, և Իրանի Իսլամական Հանրապետության միջև՝ մյուս կողմից, ազատ առևտրի գոտու ձևավորմանն ուղղված» Ժամանակավոր Համաձայնագրի կիրառման տեսանկյունից,

«Ինչպես ստեղծել Եվրասիայի միասնական տնտեսական տարածք» խորագրով անցկացված միջոցառման ժամանակ քննարկվել են մասնավորապես՝ աշխարհագրական փոքր երկրների համար ցանցային տնտեսության ձևավորման և խոշոր շուկաների հասանելիության հնարավորությունները «Մեկ ճանապարհ. Մեկ գոտի» նախագծի և «Եվրասիական տնտեսական միության և իր անդամ պետությունների՝ մի կողմից, և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության՝ մյուս կողմից, միջև տնտեսական և առևտրային համագործակցության մասին» Համաձայնագրի կիրառման տեսանկյունից:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

2018 թվականի Աստանայի Տնտեսական Համաժողովի շրջանակներում անցկացվող «ԵԱՏՄ և Իրան. Արտոնյալ առևտրի պայմաններում համագործակցության

նոր հեռանկարներ» և «Ինչպես ստեղծել Եվրասիայի միասնական տնտեսական տարածք» խորագրերով անցկացված քննարկումների ժամանակ հայկական կողմից ելույթի խոսքով հանդես եկավ Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ Տիգրան Ավինյանը:

«Եվրասիական տնտեսական միության ու դրա անդամ պետությունների՝ մի կողմից, և Իրանի Իսլամական Հանրապետության միջև՝ մյուս կողմից, ազատ առևտրի գոտու ձևավորմանն ուղղված» Ժամանակավոր Համաձայնագրի և «Եվրասիական տնտեսական միության և իր անդամ պետությունների՝ մի կողմից, և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության՝ մյուս կողմից, միջև տնտեսական և առևտրային համագործակցության մասին» Համաձայնագրի տեքստերի վերջնական տեխնիկական շտկման աշխատանքային հանդիպումներին մասնակցել են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի և Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների պատվիրակություններ՝ փոխնախարարների մակարդակով, ինչպես նաև Իրանի Իսլամական Հանրապետության և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության պատվիրակություններ:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Ստորագրվեցին ՝

«Եվրասիական տնտեսական միության ու դրա անդամ պետությունների՝ մի կողմից, և Իրանի Իսլամական Հանրապետության միջև՝ մյուս կողմից, ազատ առևտրի գոտու ձևավորմանն ուղղված» Ժամանակավոր Համաձայնագիրը,

«Եվրասիական տնտեսական միության և իր անդամ պետությունների՝ մի կողմից, և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության՝ մյուս կողմից, միջև տնտեսական և առևտրային համագործակցության մասին» Համաձայնագիրը:

9. Գործուղվող՝

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների
նախարարի տեղակալ
Հովհաննես Ազիզյան

10. Ստորագրություն, ամսաթիվ

22.05.2018 թ.